րից վինն էլ ձրիակերութիւնն է, կամ աւելի լաւ է ասել՝ ուրիշների հաշուով ապրելն է։ Հայից դարձած մահմեդականը պատահմամբ թուրքի այգու մօտից եթէ անցնելու լինի, սուս ու փուս ներս կմտնէ, կուշտ կուտէ հասած պտուղներից և մի քիչ էլ կքաղէ ճանապարհին ուտելու համար և նորից դուրս ելնելով, լուռ ու մունջ կշարունակէ իւր ճանապարհը։ Բայց Աստուած չանէ, մի և նոյն մահմեդական արարածը եթէ Հայի այգու կամ պարտէզի մօտից անցնելու լինի, անպատճառ մի քանի հոգի էլ իւր հետն առած, ներս կմտնէ (այգին), ագահարար կուտէ ճաքելու չափ։ Իբրև ճանապարհի պաշար, կքաղէ այնքան, որ հազիւ կարողանար տանել իւր հետ։ Յետոյ պըտղատու ծառերի դալար ճիւղերն ու ոստերը ջարդ ու փշուր կանէ, հասած պտուղները քաղելով և թափ տալով կտրորէ ոտքի տակ խաղաղ սրտով։ Բայց եթէ այգու մէջ որ և է անասուններ լինին, որպիսիք են՝ գառներ կամ հորթեր, նրանցից մէկի ոտքը (ոզջ-ոզջ) կկտրեն, տեղն ու տեղը խակոյն խորոված կանեն, կուտեն և ապա հանգիստ խղճով կշարունակեն իրենց ճանապարհը։ Ահաւասիկ ձեզ հզօր փաստեր Հայ դարձած մահմեդականների անխղճութեան մասին։ 1897 թ. իմ հարազատ եղբայրներս երբոր իմանում են, որ ս. Մեռնօրհնութեան հանդիսից յետոյ մի քանի օրով պիտի գնամ իրենց մօտ հիւր, նախապէս մի քանի գառներ թողնում են մեր այգու մէջ, որ մի լաւ գիրանան—չաղանան։ Նախքան մեր տուն հասնելս, մի օր, երբ իմ եղ-